



*Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարան*

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարան»-ի
2016 թվականի գործունեության վերաբերյալ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մատենադարանն իր աշխատանքային գործընթացում որդեգրել է հիմնական ուղղություններ, ըստ որոնց՝ գրադարանային ոլորտի աշխատանքներն ուղղված են եղել ընթերցողների սպասարկմանը, գրականության ձեռքբերմանը, գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, համակարգված և հեղինակային քարտարանների ստեղծմանը, սխալ դասակարգված գրքերի ճշտմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանում առկա գրականության էլեկտրոնային քարտարանի ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքները, որի միջոցով հնարավոր է դարձել գրքերի էլեկտրոնային փնտրումը:

Մատենադարանն արդյունավետ համագործակցում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանի, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության հրատարակչական բաժնի, Փարիզի «Հայկական Առաքելական Եկեղեցու գրադարան»-ի, ՀՀ ազգային գրադարանի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ), ՀՀ ազգային արխիվի, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժնի և այլ գրադարանների հետ, որոնց ֆոնդերից լուսանկարված նյութերից ստեղծվում են էլեկտրոնային առանձին թղթապանակ-ծրարներ: Անցած տարում գրքափոխանակության շրջանակներում համագործակցություն է սկսվել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգևոր ակադեմիայի հետ:

2016թ. Մատենադարանի ողջ անձնակազմը իր ջանքերն է ներդրել Մայր Աթոռում իրականացված բոլոր այն միջոցառումներին, որոնք նվիրված են եղել Սուրբ Գրքի հայերեն առաջին տպագրության 350-ամյակին:

Մատենադարանը 2016թ., թեև ոչ լիարժեք, սկսել է իր թանգարանային գործունեությունը: Մատենադարանի ցուցասրահներում ներկայացվել է հայ գիրքը

թեմատիկ հետևյալ բաժանմամբ՝ «Գիրքը Սուրբ Էջմիածնում», «Հայ հնատիպ գիրքը» և «Թեմատիկ փոփոխվող ցուցադրություն»:

2016թ. Ս. Էջմիածնի Մատենադարանի և ՀՀ ազգային գրադարանի համագործակցության շնորհիվ ավարտվել է «Արարատ» ամսագրի թվայնացված համարների հոդված առ հոդված նկարագրումը, իսկ «Էջմիածին» ամսագրի՝ նույն ուղղությամբ տարվող աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: